նրան չհիշատակելուց։ Հիվանդությունը կարող էր առաջացած լինել նաև fաշկէրից կամ ճալէրից, որոնք առհասարակ ամեն առիթով շտապում են վնասել մարդուն։ Հիվանդության դեմ մաքառելու համար, բացի դեղերից, որոնց զորությունը դարերի փորձով ապացուցված էր, ավելի ազդու էին համարվում մագիկ միջոցառումները։

Հիվանդությունը կարելի էր մի կեղտի պես լվանալ—գերեզմանի վրա, սուրբ աղբյուրի մոտ, մսի վրա, իսկ քառասունքակոխ երեխային, ծանր ոտքի ելնողին, հում միս ներս բերելուց հիվանդացած երեխային՝ մսի վրա։ Ողջիում՝ կուփված երեխային յոթ գդալ ջրով, դյուղի հիվանդներին, ննջեցյալի լողացնելուց ավելացած ջրով։

Քիչ կաթ ունեցող մոր հիվանդությունը կարելի էր լվանալ՝ տանելով այդ կնոջը Սրփ Մրտուirիսի fրատակից ոչ հեռու բխող աղբյուրի մոտ, լվանալ նրա ստինքները աղբյուրի ջրով և մոմ վառելով՝ ստանալ կաթի բնական առատությունը։

Վախը կարելի էր ջրով լվանալ։ Վախ օնօխ՝ ունեցող մարդու հետ թաղվում էր նաև նրա վախկոտությունը։ Կենդանության ժամանակ վախկոտությամբ աչքի ընկած մարդու գերեզմանի մոտ էին բերում վախից հիվանդացածին։ Գերեզմանաքարի վրա շինած փոսիկից կամ այդ քարի վրա միաժամանակ դրած ամանից ջուր էին վերցնում և այդ ջուրը հիվանդի գլխին ու կոնակին՝ թիակների միջև ածում։ Այդ ջրով նրա կուրծքը, երբեմն նաև երեսը ու ձեռները լվանում, այնպես որ ջուրը թափվի գերեզմանի վրա կամ մոտը, այն ենթադրությամբ, որ այդ գերեզմանի մեջ թաղված վախկոտությունն ավելի դյուրին կարող էր իր մոտ քաշել նաև հիվանդի վախը։

Վախից հիվանդացածին տանում էին կայծակից մահացածի գերեզմանի մոտ, մի ման ջուր դնում այդ գերեզմանի վրա, հիվանդացածը երեք անգամ կռանում և խմում էր այդ ամանից, ապա նրա ոտքերն ու ձեռքերը այդ ջրով լվանում էին, իսկ ամանը կոտրում և շպրտում։ Այսպիսով, հիվանդությունը և՛ լվացվում էր, և՛ կոտրվում, և՛ ջարդվում։ Վախը կարելի էր թաղել որպես մի իր։ Բամբակե թելով չափում էին մարդուն. նախ թելը ձգում էին ճակատից մինչև պտօկը՝ ոտի բութ մատը, ապա թելի կտրած շարունակությունը ձգում երկար պարզած ձեռների մի ծայրից մյուսը, առաջին ուղղությանը խաչաձև, և այդպիսով այդ խաչով բռնում էին հիվանդի վախը, ապա թելերը փաթաթում մեղրամոմի մի կտորի հետ և կծիկ դարձրած ննջեցյալի տերերից ծածուկ կոխում դիակի ծոցը, որպեսզի նրա հետ թաղվի նաև այդ խաչաձև կապված վախը։

Վախի պես գերեզմանի մեջ կարելի էր թաղել նաև այլ տկարություններ, օրինակ՝ չբերությունը։ Չբեր կինը թռչում էր մի քանի անգամ բաց, դեռ դիակը չամփոփած, գերեզմանի վրայով, կրկին ննջեցյալի տերերից ծածուկ։

Հիվանդությունը կարելի էր fէրէլ։ Հաճախ գործադրվում էր հիվանդին մի օղակի՝ մի ծակի, մի բացվածքի միջով անցկացնելը, հիվանդությունը նրա վրայից fէրէլու, սրբելու, հանելու նպատակով։ Այսպես, կուփված երեխային անց էին կացնում զանազան եղանակներով կազմված օղակի միջով։ Պետք է զարմանալ ժողովրդի ցուցաբերած հնարագիտության վրա, որը հասնում էր, օրինակ, նաև այն աստիճանի, որ աղբակույտի մեջ արհեստական առաջացրած ծակի միջով անց էին կացնում շարունակ զույգ երեխա ծնող կնոջը, մի այլ անգամ՝ կապույտ հաղ ունեցող երեխային։ Վերջինս անց